

մանկ և խմաստուն են, նրանց շապիկը դնում են երեխաների բարձր տակ, որպէսզի սրանք ևս օձի պէս իմաստուն, խելօք լինեն, հանգիստ քննեն:

Ոմանք էլ այս շապիկը ծխախոտի հետ խառնելով ծխում են, որպէսզի սա իւր դիւթիշ գօրութեամբ ատամի ցաւը կարէ.

### ՏԸՐԻԵՐԻ ԵՒ ԳԻԶԻՔԸՆԱԾՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԻ ՊԱՃՏԱՄՈՒՆՔ

Լոռեցիները սովորաբար խուսափում են տարրերի, ֆիղիքական երեսյիների մասին խօսելուց, շատ անզամ հետեւալ հրաշապատումով բացատրելով պատճառը:

Մի անզամ մի բանիմաց գիւղացի էն առաջը ձգած զնում է անտառ փայտ բերելու. Այսաեղ նա պատահում է մի անծանօթ մարդու, որի հետ երեխյին մարմինների մասին երկար զրայց է անում և վերջը հրաւիրում է երեկոյեան հացը ուտելու. նստում են մի ժամանակ, հանում իրենց հացն ու պանիրը, մկանում ուտել. Գիւղացին նայում է վերև, ուսոնում հինգօրեայ լուսինը և դառնալով անծանօթ հիւրին, ասում. «Ճումինը շորային եղանակ է խոստանում, որովհետեւ կորանկիւն չէ»:

Սեղանակիցը, որ հայր Յովսէվին է լիում, ձանձրացած այն բանից, որ նա շարունակ բարձր բաներից է խօսում, ձեռի գաւաղանով խփում է նրան և էշ դարձնում, բոլորովին նման նրա իշխն. Սպա փայտ բարձում վերան և ասում. «Դնա ուղղակի տունդ, և կաց այնտեղ, որքան էլ որ կինդ թակէ քեղ, որպէս զի իմանաս, թէ քա տանդ մէջ թնչ է կատարւում, մինչդեռ դու այդ թողած՝ երկինքն ես քննում».

Գիւղացին զնում է տուն իշի կերպարանկով. կինը վերցնում է փայտը և քշում զոմք. Քիշ անցած նա ուսնում է, որ կինք, որի հաւատարմութեան վրայ բոլորովին շէր կասկածում, ընդունում է մի մարդու և ամբողջ գիշերը նրա հետ անցկացնում:

Առաւօտն էշ դարձած զիւղացին վագում է անտառ, զըտնում հայր Յովսէվին և լիզում նրա ուները. Հայր Յովսէվիը

նրան կրկն մարդ է դարձնում։ Եւ այնուհետև նա թողնում է երկնային մարմինները ու իւր տնով, իւր գործով զբաղւում։

Սակայն և այնպէս՝ որքան կարողացանք տեղեկանալ, լուեցին կարծում է, թէ երկիրը մի շատ մեծ տափարակ է, որի շուրջը փաթաթուած է մի ահազին օձ, լիկ ի ո՞ն, որի պոշը բերանից մի թիզ հեռու է գտնեւում։ Մի մի անգամ սա ցանկանում է իւր պոշը խածել, չիմանալով, իհարկէ, որ դա իւրն է, բայց նրան նա դէպի պոշն է յառաջանում, նոյնքան պոշը յետ է փախչում։ որանից յառաջանում է երկրաշարժը։ Սմենահեռու վայրերում ապրում են մեղանից տարրեր արարածներ, ինչպէս օրինակ օգուզներ (հոկաներ) բարձրահասակ և սիրունատես, աճիճ-պաճիճներ (գաճաճներ), միրուրը մինչեւ գօտին, գաշոյնի ծայրը քաշ տալով ման եկողներ, թափագետներ (կիլլոպաններ)։ Կան և երկսեռ էակներ, որոնք իրենք իրենց բեղմնաւորում են և ծնում։

Ժողվոր անյատակ են և որանց մէջ ևս ապրում են այն բոլոր արարածներից, որոնք կան երկրիս վրայ, ինչպէս ծովի մարդ, ծովի աղջիկ, ծովի հրեշտակ (հուրի-մալաք), ծովի ձի, ծովի էշ և այլն։

Կապրյոտ երկնակամարն ահազին ծով է, Աստծու հրամանով կանգնած, նրանից բարձր գտնեւում է Աստծու ոսկէ աթօռուը։

Ազնմ սկզբում երկրիս շատ մօտ է եղել, սակայն մի անգամ մի պառաւ աղբը գուրս թափելիս վերան է ածել, ուստի և նա բարկացել է և վերն բարձրացել։ Նա շարունակ պտոյտ է գալիս, երկնքի երեսովվը զնում, զետնի տակովվը վերադառնում է։ Նա սաստիկ ամաշկոտ է, մի անգամ նա սել է իւր եղբայր լուսնին, թէ ես գիշերները վախոնում եմ մանդալու, ցերեկն էլ ամաշտմ, բոլորը ինձ են նայում, Լուսինը մի թոփ մեծ զնդասեղներ է առել և տուել քրոջը՝ արեին՝ ասելով։ Առ և ով քեզ նայի՝ աչքը խրիբ, և համարձակ շրջիր ցերեկը, իսկ ես գիշերը ման կը դամ։

Մի ուրիշ աւանդութիւն էլ լուսնի վրայի բծերն այսպէս է բացարարում։ Լուսինը մի անհամբեր երեխայ է եղել, մի

անգամ, երբ մայրը խմօր էր հունցում, սա լալով հայ է խնդրում։ Մայրը խմօրում ձեռքով մի ապտակ է տալիս ու անիծում, որ երբէք չկշտանայ։ Նա ապտակի հարուածից թըռշում է երկինք և այնուեղ էլ մնում, կրելով իւր երեսին խըմարի ահազին կտորները, Երբ նրա փորը կուշտ է լինում, պայծառութիւնամբ փայլում է, բայց հէնց որ բաղցում է, սկըսում է խաւարիլ։

Լուսնի նորին ծնուռզը շուտ, իսկ հնացած ժամանակը՝ ուշ կ'սպիտակի։

Եթէ լուսնի շուրջը բակ է բռնում, ասում են, թէ դա նշան է, որ եղանակը խառնուելու է։

Աստղներից իւրաքանչիւրը մի մարդու է պատկանում, որի մահուան ժամանակ նա խաւարում է և վայր ընկնում։ Իսկ նորածինի համար նոր աստղ է ստեղծում Սոտուած։

Հուայ աստղը թագաւորի աստղն է, իսկ շէկ աստղը՝ կաթուղիկոսի։ Միւր աստղերից քաջումկը (7 աստղ են) շատ նաւսու է։ Եթէ նրան տեսնի ոչխարը՝ երեսի և մէջըի բուրդը կը թափուի, եթէ ասաւարը տեսնի՝ մէջըի մագերը կը թափուին, իսկ եթէ ձին տեսնի, երեսի վրայ շերտեր կը յառաջանան։

Ջեարգան դռանը շատ անգամ մոլորեցնում է քեարվանին և ջարգում, որպինետև նրան լուսոյ աստղի աեղ ընդունելով շուտ ճանապարհ են ընկնում և մթութեան պատճառով մօլորում կամ ցրտից սառչում։

Թագր-գողի ծնննապարհին դարմանագողի ծանապարհ են կոչում և զրհեղեղի ժամանակ դրյացած երկնքի պատառածքըն համարում, որտեղից չուրը թափուել է երկիր։

Ժիածանը, որին կոչում են կանանց ու կացմիր, Աստծու զօտին է, լուանում են և փառմ։ Մրա տակից ով կարողանայ անցնել՝ աղջիկ է տպայ, տղայ է աղջիկ կը դառնայ։

Եթէ ժիածանը երեք կամարանի լինի, սաստիկ առատութեան նշան է համարւում, եթէ զիւղի ազ կողմը կապէ՛ այդ տարի հունձը առատ կը լինի, իսկ եթէ ծախ կողմը՝ սակաւ։

Երիածանը տեսնելիս ասում են՝

Կանանց ու կարմիրը իմ ախատօր զվնին,  
Մեն ու սիպոտակը թուրքի զլսին.

Ամպի գոռոցի մասին պատմում են, թէ զբհեղեղից յետոյ Սատուած ասել է մարդկանց, թէ քանի դեռ գիր շկայ, թող ամպի գոռոցը յիշեցնէ ձեզ զբհեղեղը.

Սուազին անդամ ամպը զոռալիս դիւղացիները մի քար են գնում զլսին, մի կտոր երկաթ, յաճախ մեխ, առնում քերանը և քարով միմեանց մէջքին խփում ասիլով.

Քարէ զլուխ, էրկաթի ատամ,  
որպէսզի քարի պէս ամուր զլուխ և երկաթի պէս կարծր ատամ ունենան.

Եթէ ամպի գոռոցն առաջին անդամ փետրուարին տեղի ունենայ, այդ տարին բերբը սակաւ կը լինի, իսկ եթէ մարտին՝ շատ առատ.

Անծրեւ.—Սատուած զաւագանով խփում է երկնքի ծովին և այնտեղից չուրը վայր է թափւում, և կամ ամպերը իջնում զետնից զուր են խմում և բարձրանում, անձրե անում.

Սուազին անդամ անձրե զալիս ասում են՝

Անձրե, անձրե զոլ արա,

Ցորէն հացը բոլ արա,

Անձրե, անձրե զոլ արա,

Թուրքի մողին թոլ արա:

Սուազին անդամ ձիւն գալիս'

ԶԲն ա գալիս, վաղ ա գալիս,

Պահըրի փուլինք շաղ ա տալիս:

Եթէ երաշտ է լինում, անձրե բերելու համար վեց այրի կին կամ մի առջնեղ և մի տաշտաքերանք աղջիկ՝ ձեռներին մի շոր հազցրած ցախաւել բռնած՝ շրջում են դիւզը և աների առաջ կանգնելով երգում.

Նուրին նուրին եկել ա.

Ազքա հուրին եկել ա,

Եիւա շապիկ հազել ա,

Կարմիր օօտիկ կապել ա.

Չու բերէք թաթը դնենք,

Եղ բերէք պորտը բանք.

Չուր բերէք զլինին ածենթ,  
Երկնթի դուռը բացնեց:

## Կամ

Նուրին նուրին նազարոյ,  
Էս նազարոն եկել ա,  
Քու դուռն ու դուս կայնել ա,  
Շալէ շապիկ հազել ա,  
Կէմէ գօտիկ կապել ա.  
Չու բերէք թաթը դրէք,  
Եղ բերէք վարսը բսէք.  
Չուր բերէք զլինին ածեք,  
Աստծանէ ցօղ ցօղայ,  
Դետնիցը պտուղ դուս զայ:

Ամեն տնից ջուր են դուրս բերում, ածում նախ ցախաւի-  
ի, որ նուրի է կոչւում և ապա նրան ման ածողների վրայ,  
որսնը բալրութին չեն բարկանում, այլ առնելով նուէք տուած  
ձուերը, իւղը, ալիւրը, խունկ ու մամի՝ հեռանում են: Երկար  
շրջելուց յետոյ այս ստացած նուէրները ծախելով մի քանի  
ոչխար կամ մի եղն են առնում, միւս առաւօտ եկեղեցու զբ-  
րանը մատաղ անում, բաժանում: Երբ մատաղը ուտում պըր-  
ծինում են, նուրի ման ածող կանանցից չորսը լծում են մի  
արօրի, մինը մաճկալ, մինն էլ հոտաղ է դառնում և սկսում  
են հոռովել երգելով վարել երաշտից չորացած առուների  
տեղերը:

Բացի սրանից անձրի բերելու համար դիմում են նաև  
հասկեալ միջոցների.

Օձունում պատարագից յետոյ դիւզացիները կժերով  
ջուր են բերում և լցնում Աստուածածին (Խաչկունտ) եկեղե-  
ցու հարաւային կողմում զանուող մի զոյգ բեմախաչերի զըլ-  
խին, սրանց տակ հանգստանում են Օհան Օձնեցու ծնողների  
մարմինները, սրպէսզի սրանք բարեխօսեն անձրն գալու:

Հաղբատում մինեոյն բանը կատարում են Յովհաննէս  
ծործորեցի, Պլուզ մականուանուած վարդապետի զերեզմանի  
վրայ:

Ոմանք էլ սատակած ձիու ոլոզը տանում երեք ճանա-

պարհի վրայ թաղում են, սատակած էշի գանգը ջուրն են ձգում և կամ գիր անել տալիս և դաշտում թաղում։

Իսկ երբ կամենում են յարատն տեղացող անձրեց կտրել, մի առջինեկ և մի տաշտաքերանք երեխայ բոլորովին լուռ մի խումբ տղաների և աղջիկների հետ տնէ տուն ման են զալիս։ Եմէն մի առն առաջ խումբը երգում է։

Ծօլի, ճօլի, ճօլ չկայ,  
Խաւիծ անեմ եղ չկայ,  
Ծօլին ընկել ա ծովը,  
Ժովիցը հանող չը կայ.  
Չուան քերէք դուս հանենք,  
Չաթու քերէք կցան անենք,  
Խոփ ու մեւիչ ժանգոտել են,  
Հոտաղ մամկալ թողոտել են,  
Կանանց տափին կարօտել ենք,  
Կարսիր արեւին կարօտել ենք,  
Թանձր շուաքին կարօտել ենք.  
Նդ քերէք վարսը բսենք,  
Ալիր քերէք խաւիծ անենք,  
Բլիթ քերէք ծոցը դնենք,  
Ուտենք, խմենք ցէֆ անենք։

Տնեցիները մի քիչ ցեխ են տալիս երկու լուռ երեխաների ձեռքը, և ձու, իւղ, ալիւր, աղ՝ խմբին։ Վերջը այս երեխաները աղ ցանելով ցեխի վրայ մի մեծ բլիթ են շինում և խփում մի պատի, իսկ հաւաքած ձուով ու իւղով ձուաձեղ պատրաստում՝ ուտում, ուրախանում։

Մի քանի գիւղերում էլ նոյն նպատակով նուրին ման ածող երկու երեխաները եօթը գռնից ցեխ են հաւաքում, եօթ վնդակ շինում, ապա քահանայի տանից մի աւել զողանում, վառում և այդ գնդակները մէջը ձգում։

Ոմանք էլ նոյն նպատակով կանանց խոտը կրակի մէջ են ձգում, վառում։

Ուրիշներն էլ թուրքի գերեզմանից կամ հորմի կապելու եօթը փայտերի մօտից ցեխ են հաւաքում և կրակի ձգում։

Կարկուառը նդիա մարզարէն է անում, ուստի և ծերունիները կարկուտ զալիս բղաւում են։

Եղիա մարզարա, էս չէնլիկ ա, քարերին, խարարա աշ-  
խարհին առւ:

Եւ եթէ չի լուսմ, Ս. Սարգսի փոխնդից պահածը փշում  
են դուրս բղաւելով. Ս. Սարգսիս, դու բարեխօս ոյլիս Եղիա  
մարզարէին, որ մեր որդիկերանց աշխատանքը մեզ զըսմաթ  
անի:

Եւ եթէ չի կարւում, նոյն փոխինդը խառնում են տեառ-  
նընդառաջին վառած խարսիկի մոխիրի ու աղի հետ և շաղ  
են տալիս դէպի վերե:

Եւ կամ տարեմտի գրիւթուկիս խանձողն են դուրս ձգում:

Եւ եթէ որանք էլ չեն օգնում, գութանի խոփը հակառակ  
կողմով դուրս են ձգում, որպէսզի Սոտծուն բաղրէ, թէ վա-  
րել եմ, տանջուել, ինչի Եղիա մարզարէն փշացնում է իմ  
աշխատանքը:

Կարիւտից զիւլացիները չափազանց վախենում են,  
ուստի և զատկից մինչեւ վարդավառ ամէն երկուշարժի կիրա-  
կի են պահում, Խուսաց Պրիվոլոյէ զիւլի մօտ զանուած ծօ-  
լու-բար (կարկտի հայր) ուխտատեղին հասարակական մատաղ-  
ներ ուղարկում, որպէսզի կարկուտ չը զայ և եթէ չի օգնում  
կարկտի զիր են անել տալիս:

Ջամնն մի պատաւ կին է, որ փշում է և երբ զիւլացիների  
թեղի ժամանակ ցանկացած կողմից չի փշում, հայոյում են,  
ասելով. Քաւթառ պառաւ, քո հէրն անիծած, էս կռնից փշի  
էլի:

### ՈԴԻՆԵՐԻ ՊԱՀՑԱՄՄՈՒՆՔ

Ա.

ԲԱՐԻ ՈԴԻՆԵՐ

Հըեշտակներ՝ բարի եւ շաբ.—Երկու տեսակ հըեշտակ-  
ներ կան՝ բարի և շաբ: Երկուսն էլ թեաւոր են, միմեանց  
նման, միայն բարին՝ սպիտակ է, բազմերանգ թերով, իսկ  
շաբը՝ սև:

Սրանք միշտ միմեանց հետ կռւում են, ծննդկանի, հի-